կան Վանքի մեքենայով։ «Պէտէրբուրգեան վանքը բնականներով Թումբից յետոյ կարողացաւ չլինել բառատունից աւելի հացի խմոռւթներ 20 — 30 սաժէն երկայնութեամբ. բացի սորանից նա շինած է երկու ընդարձակ շէնքեր, որոնց մէջ 70ից աւելի մարաններ կգտնվին. եօթանասուններորդ թուերում վանքը շինեց դարձեալ քանի մի առաջին շինութիւններ, որոնցից 12 տների մի երեսին միայն ութհարիւր լուսամուտից աւելի կհամարվի։ Պէտէրբուրգի վանքի բոլոր տարեկան եկամուտը Պետէրբուրգի մէջ եղած տներից եւ հողերից զուտ 200 հազար մանէթից աւելի է։ Եթէ աւելացնենք տրան ուխտաւորների եկամուտը, նուէրներ, զոհաբերութիւններ, կօպէկներ եւ այլ. յաճախ մանէթներ պատկերների առաջ մոմ վառելու համար, կօպէկներ ցանծանակի համար, մաղթանքների համար, նշխարների համար, ձէթի համար, սունազան պատկերների համար, զոփերի, մասունքի, խաչերի համար եւ այլն. եւ այլն, այն ժամանակ վանքի եկամուտը շատ եւ շատ նշանաւոր գումար կկազմէ։ Աւելացնենք սորան դարձեալ այն եկամուտը, որ ունի վանքը գերեզմանատնից, որի գերեզմանական տեղերը կվաճառվին 300 մ., 200 մ., 100 մ. եւ այլն։ «Ռուսական Աշխարհի» հաշուով կերեւի, որ ռուսական վանքերի տարեկան եկամուտը, 5 միլիօն մանէթի հաշուով, աւելի է քան թէ քանի մի եվրօպական տէրութիւնների եկամուտը։

— Յայտնի է, որ թուղթը վաղուց դարձած է փոքր ի շատէ քաղաքակրթված իւրաքանչիւր ազգի օրական գործածութեան առարկաներից մին, եւ իւրաքանչիւր տէրութեան գործածված թղթի քանակութիւնը կարող է ճշգրտոյն չափ լինել նոյն տէրութեան մտաւորական զարգացման աստիճանը գնահատելու համար։

Եվրօպան կծախսէ ամեն տարի աւելի քան 41 միլիօն 200 հազար փութ զանազան տեսակ թուղթ։ Ի նկատի առնելով Եվրօպայի 316 միլիօն բնակիչ, իւրաքանչիւր հոգուն կընկնէ տարեկան $5\frac{1}{2}$ գրվանքայ թուղթ։ Ամերիկան կգործածէ 15 միլիօն 40 հազար փութ, կամ մօտ 14 գրվանքայ իւրաքանչիւր հոգուն։ Իսկ աշխարհի միւս բոլոր մասերը հազար եօթն միլիօն հոգի բնակիչներով 1 միլիօն փութից աւելի թուղթ չեն գործածում, որ հազիւ 0,04 գրվանքայ (մօտ 4 մսխալ) կանէ իւրաքանչիւրին։ Ուրեմն երկրագունդի բնակիչների մեծ մասը գրեթէ ամենեւին կարօտութիւն չէ զգում թղթի, մտաւորական զարգացման ամենաստոր աստիճանի վերա գտնվելով։

Վերոյիշված թուից լրագրական թուղթը կգործածվի 28 միլիօն փութ, փաթաթելու թուղթը $12\frac{1}{2}$ միլիօն փութ, գրելի թուղթը $9\frac{1}{2}$ միլիօն փութ, մնացած 5 միլիօնը զանազան տեսակ թղթեր։

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Յունվարի 1ին Մայր Աթոռիս միաբանութեան ներկայանալուց եւ Նոր տարի շնորհաւորելուց յետոյ Վեհափառ Հայրապետին, բաղդ ունեցան ներկայանալու իւրեանց Վեհափառ եւ

բազմահոգ Բարերարին Գէորգեան Ճեմարանի աշակերտները որոնցմէ երկուքն կարդացին ուղերձներ։ Վ. Ն. Հայրապետը որ վաղուց կփափագէր տեսնել աշակերտներին եւ չէր կարողանում իւր փափագը լրացնել տկարութեան պատճառով, սա առաջին անգամ էր որ կտեսնէր իւր գեղեցիկ պարտէզ յուսալի ծաղիկներն անցած տարվան վշտալի անկարգութիւններից յետոյ։ Սրտաշարժ էր տեսարանը, երբ Վեհափառ Հայրապետը հրամայելով դասարան դասարան բաժանել աշակերտներին եւ նոցա մէջ շրջելով իւրաքանչիւր դասարանի հանգամանքներ իմանալով, երգեցողները «Հնչեցեն լարք» երգը կերգէին, Վ. Ն. Հայրապետը բարեհաճեց տեսնել հինգերորդ դասարան եւ արտասանեց։ Խորհրդաւոր, ազնիւ արտասուք։ Ո՜րքան փափագներ, որքան մտքեր, որքան նպատակներ Հայկեան ազգի բարոյական փրկութեան համար կբովանդակէին եւ կարտայայտէին Վեհափառ Ազգապետի սրտաշարժ արտասուքներ . . .

Սոքա են նոր տարու օրն ընթերցված ուղերձներ։

## ԱՌ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Որ փերոնեան կառաց հրեղէն նըժոյգ ի լոյծ եւ ի սանձ
Հոլաթեւեան յուրան յեթերս անդոյր ի շանթս փայլականց,
Թըռիչս ի թեւս թեթեւ օդոյն չուս երագեն սըրավար
Հուր հատանին յանդրուվարաց, ճախրեն անիւքն անդադար,
Ի գիլ ի գիլ վազեալ անդուլ մինչեւ ի ծագս աշխարհաց
Եւ յանդ հանին զամըն ողջոյն վարգեալ յոլորտս ճեպընթաց:
Բացան անդէն դըրունք նիից պայծառ արփւոյն լուսածին
Կենդանացան փառք հայրենեաց ընդ այս ծընունդ վերստին,
Շընչեաց ի սիրտ սիպ ջերմ աւիւն այգ կենսաբեր վաղեմի
Ճաճանչք հատան եւ ծագեցաւ նոր առաւօտ գեղանի:
Զուարթագէմ յԱղին լերանց սլացաւ ողին լուսագեղ
Երկնապարգեւ փունջ անթառամ հիւսկէն յերկինս եւ շըքեղ
Սաւառնաթեւ սիրոյն ի խընծեղ թեւակոխեալ իջանէ
Ճեպ տայ յընթացս շուշանագեղ պսակն ի ձեռին տարփողէ
«Օծեալըդ Տեառն» հաւատարիմ եւ արժանի պաշտօնեայ
Ա՛ռ Քեզ Զօնիք առհաւատչեայ ի դոյզն ի վարձ մըշտակայ:
Համէք, լերինք, հանէք դուք փառս տաք օրհնութիւնս Բարձրելոյն
Հանցէ ընդ ձեզ մըշտամունչ Արքանագեան տունըն ընդոյն:

Եւ մեր առտէն միաբարբառ ընդ մեծ շընորհ Աստուածեան
Կեցցէ՛ Հայր մեր դայս մաղթեցուք, յաւերժացի ձեմարան:

### Ողջերթ Դ. դասու Ընտանեկան Վարժարանի Վաղարշ.

---

### ԱՌ ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տիւն անդրանիկ պարզէ ըղձեւս յայս յաժանոր,
Աւետելով զսյղ կենսաբեր մեզ լուսաւոր:
Բնութիւն համայն խայտայ յուսով ի զարդ ծաղկին,
Եւ օրհնութիւնք յԱզատն Մասեաց զընան յերկին:
Անա զըւարթուն փողփողենէջն կազմէ հիւսակ,
Ասբերելով Մեծին գլխոյդ փառաց պըսակ:
Մեզ անխախտ տարփողելով ի ձայն գեղ գեղ,
Գայ սատառնել ի թեւս թեթեւս զգանուց շըքեղ:
Եթէ Բարձրեալն ողորմեցաւ ազգիս յաւէտ,
Զայս բաղդ կնքեաց ի Քոյդ ճակատ երջանկաւէտ:
Քեւ, ով Հայր, որ ի մթան կանգնես մեծ ըղտաճար,
Եւ թռուցանես զմիտ հայութեան ի նըմա յար:
Հորդես շաւիղ լուսոյ կենաց Քոյին հօտին.
Զիղ ծմերանց տարտամ տարափք արդ փարատին:
Ցօղեա ի մեզ, ցօղեա Դու, Տէր, շիթ քոց խանդից.
Զամրեա սանուցդ ըղձայրութեանդ կաթն խնասից:
Իսկ մեք այն ինչ զամանորայն պաշտիցեմք տօն,
Մի լըռեսցուք ջերմ օրհնութեանց ձօնել ըղձօն:
Որ նորոդէն զաշխարհ համայն ի կենս ի նոր,
Նորոգեսցէ Քոյին ըղկեան ի թափ ի նոր:

### Ողջերթ Ե. դասու Մարթէի Տ. Գասպարեան Վ. Ռոմայեան

Վաղարշապատի օրիորդական ուսումնարանի մեծ. հոգաբարձուհի տիկին Շամքորեան վերջին ժամանակ կարգադրած էր վիճակախաղ. Վեհափառ Հայրապետի հրամանով եւ մեծ. հոգաբարձուհու հրաւիրմամբ ներկայ էր եւ Խորէն Վ. Ստեփանէն, որ քանի մի խօսքով բացատրեց ներկայ գտնուածներին օրիորդական ուսումնարանին օգնելու կարեւորութիւնը. Վիճակախաղից եւ մասնաւոր ստորագրութենից (որ հոգացին Խորէն Վ. Ստեփանէն եւ տեղիս բարեսէր Գաւառապետ մեծ. պ. Գէորգ Խանազեանը) գոյացաւ 316 մ. որ բաւական մեծ գու-

մար կհամարիլի Վաղարշապատի համար։ Սա ցոյց կտայ ներկայ գտնուածների ջերմեռանդութիւնը դէպի հաստատութեան բարիքը։ Բայց եւ այնպէս կցանկայինք, որ դպրոցը, նոյն եւ սրահանը, այսպիսի պատահական եկամուտի յոյսով չմնար, այլ հաստատութիւնը հոգ տանէր ապահովելու այս կարեւոր հասարակական հաստատութիւնները։

Նոյնպիսի եւ առաւել մխիթարական գործով նշանաւորեց այս նոր տարու հանդիպումն Իգդիրի հաստատութիւնը, որ Էջմիածնից 36 վերստ հեռու է։ Նորա ցանկացել էին իւրեանց բարեսէր Գաւառապետի մեծ. պ. Պետրոս Բէժանբէգեանի, սորա օգնական պ. Զալալեանի, ար. Հմայեակ Վ. Արշարունու եւ բժիշկ պ. Աղասարեանի յորդորմամբ ընդհանուր մի ժողով կազմելու դպրոցի բարեկարգութեան մասին խորհրդածելու։ Դպրոցի հոգաբարձուներից մին եկաւ Էջմիածին եւ խնդրեց Վեհ. Հայրապետից հրաման տալ Խորէն Վ. Ստեփանէին գնալու եւ ներկայ լինելու նոյն ժողովին։ Վեհ. Տէրը թէեւ առաւել յարմարաւոր կհամարէր տօներին յետաձգել գործը, բայց զիջանելով Իգդիրի հաստատութեան խնդրին, պատուիրեց Խորէն վարդապետին մի օրով գնալ Իգդիր։ Իգդիրի մէջ գեղեցիկ ժողով գումարվեցաւ եւ զանազան յորդորական ճառախօսութիւններից յետոյ, թէ աշակերտների, թէ ուսուցիչների եւ թէ վարդապետների կողմից, հաստատութեան առաջարկվեցաւ դպրոցի հաստատ ապրուստ բանալու համար ստորագրութեամբ փող ժողովել, եւ ահա նոյն օրը 2000 մ. փող ստորագրեցին եւ նոյն գումարը միւս օրը ժողովեցին։ Փառք եւ պատիւ Իգդիրի հայ հաստատութեան, որոնք Արարատի ստորոտում բնակելով կկամենան յառաջանել իւրեանց մէջ հայասիրական հին նախնիների զգացմունքը։ Մեծ. Գաւառապետի պ. Բէժանբէգեանի, նորա օգնականի, պ. Աղասարեանի անուններն առանձին շնորհակալութեամբ յիշելով, չէ կարելի մոռանալ այն առանձին ջերմեռանդութիւնը դէպի դպրոցը, որ ցոյց կտար դպրոցի հոգաբարձու պ. Աղախան Կանդյեանը, փութալով արժանանալ Իգդիրի հաստատութեան յորդորները, Միւս օրն դպրոցի մեծ. հոգաբարձուներն, զոյց է մնամբ

նախընթաց երկրային խառն ճաշի տպաւորութեան տակ, 100 մ. մասուցին Խորէն վ. Ստեփանէին յօգուտ Գէորգեան ճեմարանի, որտեղից նորա ինչպէս եւ ուրիշ տեղերի Հայերն գիտի յուսան ունենալու ժամանակով թէ արժանաւոր ուսուցիչներ եւ թէ հոգեւորականներ:

Գէորգեան ճեմարանի ուսուցչական ժողովը Խորէն վ. Ստեփանէի առաջարկութեամբ երկարատեւ վիճաբանութիւններից յետոյ յանձնեց, որ ճեմարանի իւրաքանչիւր դասարանը մի դասախօսի ունենայ ուսուցիչներից ուսուցչական ժողովի ընտրութեամբ: Դեկտեմ. 15ից սորա ընտրեցան դասախօսներ. Ա. դասարանի — Գրիգոր Ե. Աղափիրեան, Բ. դասարանի — Կարապետ Կոստանեան, Գ. դասարանի — Խորէն վ. Ստեփանէ, Դ. դասարանի — Մարտիրոս Սմէօնեան, Ե. դասարանի — Վահան վ. Բաստամեան:

Դասախօսների համար խմբագրուած հրահանգը միւս անգամ:

Անցեալ 1878 թ. Սեպտեմբեր գիւղի (Բութայինի մօտ) հայ հասարակութիւնից մի Գորխայ Մղերեան մախնաններով, նորին գիւղի ծխական Տէր Գաւրիլ քահանայի աշխատութեամբ եւ յորդորմամբ: Բութայինի նահանգական դատարանում հաստատուած կտակով կտակած է նոյն գիւղի Ս. Աստուածածնի եկեղեցուն իր անձնական հասարակ կալուածներից մինը, որ արժէ մօտ 300 մանէթ: Բանի որ ամուսինը կենդանի էր, այնտեղ դրանի ընակը, իսկ նորա մահից յետոյ բոլորովին եկեղեցուն դրեր ստացուներ. Կտակակատար նշանակուած է նոյն գիւղի ծխական Տէր Գաւրիլ Տէր Գրիգորեանը:

Դեկտեմբեր ամսին Բիւրնէքից Ալագեազի հիւսիսային եկեղեցութիւններից յօժարութեամբ եւ շնորհակալութեամբ կհրատարակէ խմբագրութիւնս:

Բիւրնէքի կարբեղւոյն Միքայէլ աղա Զաքարեան չարժակած բարեպաշտ եւ Ջերմեռանդ գիւղացիներից հանգուցեալ ընծայել ի վայելումն բարերար Ս. Աստուածածին եկեղեցու մի մեծ դանդակ 27 փութ ծանրութեամբ, արժողութեամբ մինչեւ

700 րուբ. արծ: Այս առաջին անգամ չէ որ Զաքարեան ազնիւ եւ առատաձեռնաշատ գերդաստանը այսպիսի մեծագումար նուիրատուութիւններ կանէ մեր սուրբ եկեղեցւոյն. Նոքա միշտ պատրաստ են եղել բարի օրինակ տալ համազգի եղբայրներին իւրեանց ազգասիրութեամբ եւ բարեպաշտութեամբ: Հրապարակաւ կյայտնենք մեծապատիւ պ. Զաքարեանին Քիշնեւի բոլոր ժողովրդի կողմից շնորհակալութիւն իւր այդ նուիրատուութեան համար: Իւրեանց այսպիսի առաքինական նուէրներով Զաքարեան բարեպաշտ գերդաստանը պայծառացնելով տեղիս Ս. եկեղեցին եւ լցուցանելով նորա պակասութիւնները պիտի փառաւորեն Զաքարեան ազնիւ տոհմը եւ բարի օրինակ լինին ուրիշներին, որով եւ երկնային Պարգեւատուէն առատապէս կընդունեն նոքա ամենայն շնորհներ իւրեանց բարեգործութիւնների փոխարէն:

Քիշնեւի Հայոց Ս. Աստուածած. եկեղ. Երեսփոխ. Ս. Բարխուդարեան:

Դեկտեմբեր ամսին Քարլանսարայ գիւղի ծխական քահանայ Տ. Ղուկաս Սիմէօնեան, յայտարարութեամբ Վեհափառ Կաթողիկոսի անունով տեղեկացրեց, որ Թուշան եւ Շահփար Առաքելեանները նուիրած են մի հազար րուբլի յօգուտ նոյն Քարլանսարայ գիւղի ծխական դպրոցի հանգուցեալ Վիրապ Առաքելեանի արդիւնքներից, ի յիշատակ նոյն հանգուցեալ անձի, վերոյիշեալ Տ. Ղուկաս քահանայ Սիմէօնեանի յորդորմամբ: Վեհափառ Կաթողիկոսը մխիթարվելով, այսպիսի ազգաշէն նպատակով ցոյց տուած ջերմեռանդութեամբ, բարեհաճեց օրհնութեան Կոնդակ շնորհել Թուշան եւ Շահփար Առաքելեաններին եւ գոհունակութեան Կոնդակ Ղուկաս քահանայ Սիմէօնեանին:

Էջմիածնի Ս. Աթոռիս վանքական կառավարութեան անդամների եռամեայ պաշտօնավարութեան լրանալու պատճառով, Վեհափառ Կաթողիկոսի Կոնդակով ներկայ տարւոյ յունվարի 9ին № 8 նշանակվեցաւ Սինօդի անդամ Գրիգոր վարդապետ Տէր Մաթէոսեան վանքական կառավարութեան նախագահ, իսկ անդամներ նշանակվեցան. Գէորգ վարդապետ Արամէլիքեան, Մամբրէ վարդապետ Գրիգորեան եւ Գարեգին

վարդապետ Սաթունեան, որոնք պատուիրվեցաւ իւրեանց պարտաւորութիւնները վարել Վեհափառ Հայրապետի կանոնադրութեան համաձայն, հաւատարմութեամբ եւ ճշդութեամբ անել Աթոռիս մեծ Տան ծախսերը եւ բարւոք եւ շէն դրութեամբ պահպանել Աթոռիս վանքային կալուածները։